ԻԲ.00.01 – «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցող Եղիազարյան Սյուզաննա Ժուլվերնի՝ «ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ատենախոսության վերաբերյալ պաշտոնական ընդդիմախոսի

ԿԱՐԾԻՔ

Հեղինակի կողմից հետազոտված հիմնախնդիրը ժամանակակից հայաստանյան հասարակության համար կարևոր և հրատապ խնդիրներից մեկն է հանդիսանում: Այն մեծապես կապված է ՀՀ-ում աշխատաշուկայում առկա տարածաշրջանային անհավասարակշռությունների հետ: Երևանի հետ համեմատ Հայաստանի մարզերում ուսանողների զբաղվածությունը լուրջ դժվարությունների հետ է բախվում աշխատատեղերի նվազ լինելու պատճառով, քանզի հատկապես Երևանում են կենտրոնացած հիմնական տնտեսական և կրթական ռեսուրսները: Մարզերում սովորող ուսանողներին հաճախ հասանելի չեն կարիերայի նույն հնարավորությունները, ինչ մայրաքաղաքի իրենց հասակակիցներին: Սա անհավասարակշռություն է ստեղծում մասնագիտական փորձի հասանելիության հարցում և ազդում երիտասարդների երկարաժամկետ կարիերայի հեռանկարների վրա:

Այդ հարցերը սերտորեն կապված են նաև երիտասարդների «ուղեղների» արտահոսքի հետ: Մարզերում աշխատատեղերի և զբաղվածության հնարավորությունների բացակայությունը նպաստում է ուսանողների արտագաղթին Երևան կամ արտերկիր՝ ուսումն ավարտելուց անմիջապես հետո: Սա ավելի է սրում գյուղական վայրերի հայաթափման խնդիրը և խաթարում է երկրի տնտեսական ներուժը, քանի որ մարզերում նվազում է մարդկային կապիտալը: Այս խնդրի ուսումնասիրությունը կարող է օգնել մշակել երիտասարդների արտահոսքը նվազեցնելու և տարածաշրջանային տնտեսական նախագծերում ներդրումներ ներգրավելու ռազմավարություններ: Ուսանողների

զբաղվածության խնդիրն անմիջականորեն կապված է Հայաստանի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման հետ: Ուսանողների աշխատաշուկայում ընդգրկվելու ցածր հնարավորությունները մեծացնում են սոցիալական լարվածությունը և նպաստում երիտասարդների գործազրկության աճին:

Վերջին մի քանի տարիների իրադարձությունների հետևանքների պայմաններում, մասնավորապես՝ համաճարակի, պատերազմի, Արցախից բռնի տեղահանված մարդկանց խոշոր ներգաղթի պայմաններում Հայաստանի շատ մարզեր աջակցության կարիք ունեն իրենց ենթակառուցվածքներն ու տնտեսությունը վերականգնելու տեսանկյունից: Այս համատեքստում ուսանողների զբաղվածությունը դառնում է կայունության և սոցիալական բարեկեցության խթանման կարևոր ասպեկտ: Երիտասարդությունը կարող է դառնալ վերականգնման շարժիչ ուժ, եթե իրենց հայրենի մարզերում ստեղծվեն պայմաններ նրանց մասնագիտական աճի և ինքնազարգացման համար:

Թվային տնտեսությանն անցնելու և հեռահար աշխատանքի աճի հետ մեկտեղ ուսանողների համար աշխատանքի նոր հնարավորություններ են ի հայտ գալիս նույնիսկ հեռավոր շրջաններում: Այս ասպեկտի ուսումնասիրությունը կարող է օգնել հասկանալու, թե ինչպես ժամանակակից տեխնոլոգիաները կարող են օգնել լուծել զբաղվածության խնդիրը և նվազեցնել կենտրոնի և մարզերի միջև եղած անջրպետը:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ ատենախոսության շրջանակներում իրականացրած հետազոտության խնդիրները արդիական են և պահանջում են լուրջ ուսումնասիրություն:

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլուխներից:

Առաջին գլխում հեղինակը նկարագրում է զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում, պետության դերն աշխատաշուկայում, ինչպես նաև կրթության և աշխատաշուկայի կապը Հայաստանում: Երկրորդ գլխում հեղինակը անդրադառնում է կրթության հիմնահարցերին, ներկայացնելով կրթությունը մի կողմից որպես ծառայություն, մյուս կողմից՝ որպես հանրային բարիք: Այնուհետ հեղինակը նկարագրում է մասնագիտական կողմնորոշումների հիմնահարցը, և փորձում է սահմանել «աշխատատեղերի տնտեսական նպատակահարմարություն» կոնցեպտը, մեկնաբանելով այն երկակի. մի կողմից աշխատողի տեսանկյունից և մյուս կողմից՝ պետության տեսանկյունից: Երրորդ գլուխը նվիրված է հեղինակի կողմից իրականացված հետազոտությանը, որն իրականացվել է Գավառի Պետական համալսարանում, ընդ որում կիրառելով

երկու մեթոդներով հետազոտություններ ուսանողների, դասախոսների և գործատուների հետ: Այնուհետ հեղինակը փորձում է նկարագրել մի շարք սուբյեկտների՝ ուսանողների, գործատուների, բուհերի, զբաղվածության կարգավորման պետական մարմինների համագործակցության մի մոդել, որը միտված է ուսանողների զբաղվածության ապահովմանը:

Աշխատանքն աչքի է ընկնում հետազոտված խնդիրների արդիականությամբ, խնդրին վերաբերող լայնածավալ հետազոտական նյութերի ուսումնասիրություններով:

Աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից և վիճահարույց հարցադրումներից: Մասնավորապես.

- Ատենախոսությունը նվիրված է մարզերի ուսանողների զբաղվածության հիմնախնդիրներին, մինչդեռ ատենախոսության վերլուծության հիմնական մասը վերաբերում է պրոբլեմի ընդհանուր նկարագրությանը ողջ Հայաստանի շրջանակներում; այդ առումով ցանկալի կլիներ շեշտադրել բուն մարզերի երիտասարդ ուսանողների զբաղվածության առանձնահատկությունները, ի տարբերություն մայրաքաղաքի ուսանողների: Դրա հետ կապված ատենախոսության մեջ արված եզրակացություններում և առաջարկություններում ցանկալի կլիներ ներկայացնել բուն մարզերին բնորոշ հիմնախնդիրների կարգավորման մեխանիզմները: Մասնավորապես, հասկանալի չէ, թե ինչո՞ւ ատենախոսության մեջ ներկայացված ուսանողների զբաղվածության ապահովման մոդելը ներկայացված է հատկապես մարզերի ուսանողների համատեքստում, առավել ևս, որ այն պահանջում է լուրջ կառավարման և կազմակերպչական ներուժ:

- Ատենախոսության Գլուխ 1-ում և Գլուխ 2-ում ներկայացված ՀՀ-ում առկա կրթական և զբաղվածության հիմնախնդիրների վերլուծությունների մեծ մասը հիմնված է բավականին հնացած տվյալների վրա, մասնավորապես, 2009-2016թ.թ. տվյալների վրա: Ցանկալի կլիներ հստակ տարբերակել աշխատաշուկայում և կրթության համակարգում առկա ժամանակակից միտումները 10 և ավել տարի առաջ առկա միտումներից:

Դրա հետ մեկտեղ աշխատանքում որպես հետազոտության տեսական հիմք ներկայացված Մ. Կաստելսի և Դ. Բելլի տեսություններն ինֆորմացիոն հասարակությունների առանձնահատկությունների վերաբերյալ (մշակած համապատասխանաբար՝ 1996-2000 և 1973-1999 թվականների միտումների

հիման վրա) այժմ բավականին հնացել են, քանի որ տեխնոլոգիաները արագ զարգացումներ են ապրում և փոխակերպում զբաղվածության բնույթը: Ցանկալի կլիներ աշխատանքի շրջանակներում վերլուծել տնտեսության և կրթության թվայնացման և ինֆորմատիզացման համատեքստում փոխակերպվող աշխատաշուկայի օրինաչափություններին նվիրված ժամանակակից աշխատանքները, օրինակ՝ Կարլ Ֆրեյի (Carl Benedikt Frey) "The Capital, Labor, and Power in the Age of Automation" (2019) կամ Դանիել Սասկինդի (Daniel Susskind) "A World Without Work: Technology, Automation, and How We Should Respond" (2020) և այլն: Հայաստանին վերաբերող համատեքստում աշխատանքում տեղ չի գտել հետհամաճարակային, հետպատերազմյան զարգացումների ազդեցության վերլուծությունը ՀՀ աշխատաշուկայի և կրթության վրա:

- Հեղինակն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում ընտանիքի և մտերիմների ազդեցությանը ուսանողների մասնագիտական կողմնորոշումների վրա, դա համարելով բացասական, ինչը բավականին վիճելի է: Նաև տվյալ պնդումները խնդրահարույց են՝ համեմատելով քանակական հետազոտության տվյալների հետ: Նշված դիտողության հետ կապված ցանկալի կլիներ ատենախոսությունում հստակեցնել ներկայացված բնութագրիչների չափորոշիչները: Մասնավորապես, հասկանալի չեն «սխալ» և «ճիշտ», «արդյունավետ» և «անարդյունավետ» լինելու չափորոշիչները, ե՞րբ աշխատողը կարող է համարվել իր տեղում և երբ՝ ոչ (էջ 83-ում գրված է «*այս դեպքում առաջնորդվում են «յուրաքանչյուր աշխատող իր տեղում» սկզբունքով*»), նաև հստակեցում է պահանջում «*աշխատատեղերի տնտեսական նպատակահարմարության*» չափորոշիչը, հասկանալու համար, թե ինչպե՞ս հստակ կարելի է որոշել, թե ո՞ր աշխատատեղը նպատակահարմար է, իսկ որը՝ ոչ:

- Ինչ վերաբերում է հետազոտության մեթոդաբանությանը, ապա ցանկալի կլիներ մանրամասնել, թե ինչո՞ւ են դասախոսներն ընտրվել միայն հումանիտար և բնագիտական ուղղությունների ֆակուլտետներից (էջ 100), նաև ինչպիսի՞ փաստաթղթեր են վերլուծվել հետազոտության շրջանակներում: Վերլուծության մեջ չեն երևում փաստատղթերի վերլուծության արդյունքները: Ներկայացված է քանակական տվյալների միայն նկարագրական վիճակագրական վերլուծությունը, մինչդեռ ցանկալի կլիներ վերլուծությունը իրականացնել տարբեր գործոնների ազդեցությունը գնահատելով, մասնավորապես, ներկայացնել հիմնախնդիրների վերլուծությունը

աշխատաշուկայում տարբեր մասնագիտությունների ուսանողների համար, վերհանել սեռի, առաջադիմության հետ կապերը:

Ատենախոսությունում ցանկալի կլիներ ավելի հստակ ներկայացնել եզրակացությունների և գնահատականների հիմնավորումները՝ առաջնորդվելով հետազոտությունների արդյունքներով: Դրա հետ կապված՝ աշխատանքում առկա են մի շարք եզրակացություններ և գնահատականներ, որոնց հիմնավորումները հասկանալի չեն կամ բավականին ընդհանրական բնույթ են կրում (մասնավորապես, էջեր 93-94, 136-138 և այլն):

Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ կարծիքը, պետք է նշել, որ Սյուզաննա Ժուլվերնի Եղիազարյանի հեղինակած ատենախոսությունը նվիրված է Հայաստանի հասարակության համար արդիական թեմայի: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի հիմնական բովանդակությանը: Հեղինակի կողմից հրատարակված աշխատություններն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Ելնելով վերոշարադրյալից գտնում եմ, որ Սյուզաննա Ժուլվերնի Եղիազարյանի՝ «ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ատենախոսությունն ընդհանուր առմամբ բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ՀՀ ԲՈԿ-ի կողմից առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Սյուզաննա Ժուլվերնի Եղիազարյանը հաջող պաշտպանության դեպքում կարող է արժանանալ ԻԲ.00.01 – «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ հայցվող սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, ս. գ. դ. Մ. Ի. Զասլավսկայա

Մ.Ի. Զասլավսկայայի ստորագրությունը՝ հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար _____ բ.գ.թ. Մ. Վ. Հովհաննիսյան

«7» նոյեմբերի 2024 թ.